ճառագայթներ էին թառում եւ նրանց ներս ընկած կրծքերի վրայ հաստ շուքեր էին նըստում:

Սեղանի եռեւ՝ սիւներով եւ արձաններով ծածկուած՝ գունաւոր մարմարների մէջ սեղմըւած, երգեհոնը, ոսկէ վանդակում փակուած արքայական արծուի նման, բաց էր անում իր թեւերը, բամբ ձայների վրայ սահում, սուրում վեր, գլուխը զարնում գմբէթին եւ հեծկլտալով վայր ընկնում եւ գետնի վրայ ցաւ եւ ողբ կուտակում:

Եւ որովհետեւ մոմերը բոլոր անկիւններում վառ էին եւ շուքերը անհանգիստ, թւում էր որ մարմարների վրայ մեծ մի լուսին է փչրուել:

Երեկոյեան, ժամերգութեան այս պահին, եկեղեցում շատ մարդ չկայ: Աթոռների վրայ չոքած միշտ նոյն բարեպաշտ պառաւ կանայք եւ հանգստութեան կոչուած ծեր պաշտօնեաները: Մի քանի երիտասարդ աղջիկներ, աղօթագիրքը սրտերնին սեղմած եւ իրենց երազուն աչքերը վեր տնկած:

Մարմարէ նստարանների վրայ, երկայն մազերով արուեստագէտներ պատերի վրայ տարակուսանք եւ հիացում էին փնտռում: Ու խումբը անխուսափելի օտարականների, որոնք աղմուկով եւ չինծու հետաքրքրութեամբ մտան էին գալիս երբայական պալատի ձեւով տաճարում ու լսում միշտ նոյն չիշերօնիի տափակ բացատրութիւնները:

Այնտեղ, սեղանի վրայ, միապաղաղ ձայնով, կրօնաւորների մի խումբ պատասխանում էր երգեհոնին:

Ձայները թրթռում էին, տնքում, փայտէ խշշոցի նման հնչում ու յանկարծ արթնանալով, վախցած աղաւնիների նման վեր բարձրանում, պտոյտ գալիս եւ երգեհոնի բացած խոր նիշերի մէջ կուչ գալիս:

— Ես սիրում եմ համեստ ժամերգութեան այս ժամերը, երբ արարողութիւնը կատարւում է ինքը իրեն համար,— ասում է մօտս կանգնած Էլիօնօրան:

— Իսկ ես եկել եմ միայն քեզ համար:

Բարձրահասակ, երկայն սրունքներ, նուրբ եւ ճկուն գեղեցիկ գլուխ, դրեթէ դասական գծեր, մեծ փայլուն աչքեր եւ ուռած կոկորդի մէջ կլկլացող հնչուն ձայն:

— Այս տեղ, Սուրբ Մարկոսում, կարծես ամէն ինչ մեծանում, բարձրանում է,— շարունակում է նա,— ամէն ինչ հարստանում եւ փարթամանում է...

— Որովհետեւ քո սիրտդ հարուստ է եւ փարթամ...

Լոյսերի խաղ, ոսկի, մոմ եւ այն, տեսանելի, չօշափելի, երազը, որ բոլոր անկիւններից քեզ խօսում է. երազ, որ ապրում է իրական կեանքով եւ որի վրայ ոչինչ չի կարելի աւելացնել, եթէ ոչ մեր գիտակցութեան եւ մեր զգացմունքների համակրութիւնը...

— Դու եւս այդպէս ես, Էլիօնօրա:

Բռնում է ձեռքիցս, տանում սեղանի ձախ կողմը:

— Նայի՛ր, չկայ մի բան, որ միւսին նմանի եւ, սակայն, ի՞նչպիսի ամբողջութիւն: Մեր հայրերը գիտէին գեղեցկութեան գաղտնիքը:

Ու կամաց, անաղմուկ քայլերով, մենք շրջում էինք մեծ տաճարի մէջ, կանգ առնելով քանդակների առջեւ, խճանկարների մօտ, մութ կամարների տակ:

Երգեհոնը շարունակում էր նուագել եւ եկեղեցու միւս ծայրից կրօնաւորների ձայները հասնում էին մեզ այլեւս հեռաւոր, խորհրդաւոր մշուշի մէջ կորած:

Ես հանդիպել էի նրան առաջին անգամ Բենեդետտ Մարչելլոյի սրահում, սիմֆոնիք համերգի ժամանակ: Բարեկամներս ինձ ցոյց տուին նրան, որ ազնուական տոհմի մի անուն էր կրում, որ չնայած իր առաջացած տարիքին, դեռ հրաշալիօրէն գեղեցիկ էր եւ որի մասին ամբողջ Եւրոպան խօսում էր, արքայական իր կապերի համար: Էլիօնօրան նստած էր նրա մօտ, ընածին այն գոռոզութեամբ, որ յատկանշական է պատմական անուն կրող ընտանիքներին, եւ միեւնոյն ժամանակ, խօսելու ատեն, պարզ, համեստ եւ ամէնուն մատչելի այն ձեւերով, որոնք համակրութիւն են շարժում եւ հրապոյր:

Ես դիտում էի նրան հեռուից: Մօրը կապոյտ, խորը եւ կլանող աչքերը անհանգիստ

Հայ մատենագրության թուանշանային գրադարան